ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան 02 հուլիսի 2019թ.

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն, ի դեմս Գլխավոր տնօրեն Վ.Ստեփանյանի (այսուհետև՝ Իրացնող), մի կողմից և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ի դեմս գլխավոր քարտուղարի Ս.Ամիրխանյանի (այսուհետև՝ Գնորդ), մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Իրացնողը պարտավորվում է վաճառել, իսկ Գնորդը՝ գնել 500 (հինգ հարյուր) հատ Ամերիքն Բենքնոթ Քոմփանիի կողմից պատրաստված արժեթղթի բլանկ:

2. Վճարման չափը և կարգը

2.1.Պայմանագրի գումարը որոշվում է ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված սակագների, այն է.

մինչև 999 բլանկի համար՝ 175 դրամ /առանց ԱԱՀ/

Սույն Պայմանագրի գումարը կազմում է 87500 (ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարած ԱԱՀ՝ 17500 (տասնյոթ հազար հինգ հարյուր) դրամ, ընդամենը՝ 105000 (մեկ հարյուր հինգ հազար) դրամ:

2.2.Պայմանագրի գումարը Գնորդը կարող է վճարել Հայբիզնեսբանկում Իրացնողի հաշվարկային հաշվին փոխանցման միջոցով ՝ Պայմանագրի ստորագրման պահից երեք բանկային օրվա ընթացքում:

3. Կողմերի պարտավորությունները

3.1.Իրացնողը պարտավորվում է Գնորդին բլանկները տրամադրել սույն պայմանագրի ստորագրման պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

3.2.Գնորդը պարտավորվում է Իրացնողին հաշվետվություն ներկայացնել իր գնած յուրաքանչյուր բլանկի վերաբերյալ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1.Վճարումը ժամանակին չիրականացնելու դեպքում Գնորդը Իրացնողին վճարում է տույժ՝ ուշացրած յուրաքանչյուր օրվա համար սույն պայմանագրում նշված գումարի 5%-ի չափով:

4.2.Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումից հրաժարվելու դեպքում հրաժարվող կողմը մյուս կողմին վճարում է տույժ՝ սույն պայմանագրում նշված գումարի 20%-ի չափով:

Scanned by CamScanner

5. Վեճերի լուծման կարգը

5.1.Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Այլ դրույթներ

6.1.Պայմանագիրը կնքվում է երեք հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ և մեկ օրինակ՝ արժեթղթերի բլանկների պահատվությունն իրականացնող ՀՀ ֆինանսների նախարարություն փոխանցելու համար:

6.2.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից՝ մինչև կողմերի պայմանագրով նախատեսված պարտավորությունների լիարժեք կատարումը:

Կողմերի իրավաբանական հասցեներն ու ստորագրությունները

Իրացնող՝	Գնորդ՝
«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա»ԲԲԸ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 26/1	ք.Երևան, Վ.Սարգսյան 3/3
ՀՎՀՀ 02555643	
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	
h/h 1150000517850100	
/Վ.Ստեփանյան/	/Ա.Ամիրխանյան/

Scanned by CamScanner